ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԳԵՎ ՌԽՖՍՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱՇՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

355
Պ-24

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

355
Դ-24

01 MAR 2010

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒՅՈՒՆ

ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԹԱՐԳՄ. Պ. Պ. ԱԹԱՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1940

18 JUL 2013
358.92
40.475

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. Պաշավիաքիմի խնդիրները 3
II. Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպության կառուցվածքը . . 4
III. Պաշավիաքիմի անդամների մասին 5
IV. Պաշավիաքիմի անդամների ընդհանուր ժողովը 8
V. Սկզբնական կազմակերպության խորհուրդը և նախագահը . . 9
VI. Սկզբնական կազմակերպության ակտիվը 12
VII. Մասսայական քաղաքական և պաշտպանական աշխատանքը . . 13
VIII. Մուտքի վճարներն ու անդամավճարները և կազմակերպության միջոցները 17
IX. Կուսակցական ղեկավարությունը և Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպության կապը մյուս հասարակական կազմակերպությունների հետ 19
X. Վերատուգիչ հանձնաժողով 19

ПОЛОЖЕНИЕ
о первичной организации ОсоавиохимаСССР и РСФСР

Гиз. Арм. ССР, Ереван, 1940

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР
4134 кн

Պատ. խմբագիր՝ Գ. Գյուլզադյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Գրավիչի լիպոդր՝ Բ — 1052 Հրատ. 5151.
Գնավեր 101. Տիրաժ 4000.
Թուղթ 62×94. Տպագր. 1¼ մամ.
Մեկ մամ. 48,680 նշան.
Հանձնված է արտադրության հունվարի 20-ին 1940 թ.
Ստորագրված է տպագրության համար փետրվարի 25-ին 1940 թ.

Հայպետհրատի I տպարան, Երևան, Լենինի, 65

(5588-53)
22182-59

I. ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է» (ԽՍՀՄ Սահմանադրության հոդ. 133):

Պաշավիաքիմը ԽՍՀՄ աշխատավորների մասսայական կամավոր պաշտպանական ընկերությունն է, վորը կոչված է ոգնել կուսակցությանը և կառավարությանն ամրապնդելու հայրենիքի պաշտպանունակությունը:

Պաշավիաքիմի հիմնական խնդիրն է՝ կատարել ընկեր Ստալինի ցուցումն այն մասին, վոր անհրաժեշտ է «մեր ամբողջ ժողովուրդը պահել մոբիլիզացիոն պատրաստականության վիճակում ռազմական հարձակման վտանգի հանդեպ, վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել»:

Այս նպատակով Պաշավիաքիմն անց է կացնում «...բանվորների-ծառայողների, ինտելիգենցիայի, սովորողների ու կոլտնտեսականների պատրաստությունը հոգուտ պետության պաշտպանության: Միաժամանակ ոգնում է Կարմիր բանակին զանազան ռազմական մասնագիտությունների կադրերի մշակման նախնական «սեւագործ» աշխատանքի ասպարիզում» (Վորոշիլով):

Պաշավիաքիմը Համ Կ(բ)Կ ղեկավարությամբ դաստիարակում է իր անդամներին ջերմ սիրո և անսահման նվիրվածության վոգով դեպի սոցիալիստական հայրենիքը, Լենինի-Ստալինի մեծ կուսակցությունը, խորհրդային կառավարությունը, ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինը, պատրաստակամության վոգով ամեն մի բոլշևիկ հայրենիքի պաշտպան կանգնել և պաշտպանել այն արիաբար, ինքնուրույն, չխնայելով իրենց արյունն ու նույնիսկ կյանքը, թշնամիների հանդեպ լիակատար հաղթության հասնելու, կոմունիզմի կատարյալ հաղթանակի համար:

Իր գործարանը, կոլտնտեսությունը, հիմնարկությունը և այլն «պաշտպանության ամրոց» դարձնելու համար մղվող պայքարը պա-

ջավիաքիմիական կազմակերպության յուրաքանչյուր անդամի պատվի և հայրենասիրական պարտքի գործն է։

II. ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Պաջավիաքիմի հիմքերը հանդիսանում են պաջավիաքիմիական սկզբնական կազմակերպությունները։

Սկզբնական կազմակերպություններն ստեղծվում են արդյունաբերության ու տրանսպորտի ձեռնարկություններում, հիմնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ-ում, ուսումնական հաստատություններում, տնային վարչություններում և խոշոր տներում, Պաջավիաքիմի առնվազն յերեք անդամ յեղած ժամանակ։

2. Պաջավիաքիմի նոր սկզբնական կազմակերպության ձևակերպման կարգը հետևյալն է. ընկերության անդամ ընդունվել ցանկացողները դիմում են տալիս Պաջավիաքիմի ամենամոտիկ սկզբնական կազմակերպությանը կամ շրջանային (քաղաքային) խորհրդին. ընկերության նոր ընդունված և մյուս անդամները (առնվազն 3 մարդ), Պաջավիաքիմի շրջանային (քաղաքային) խորհրդի ներկայացուցչի ներկայությամբ, անց են կացնում կազմակերպական ժողով, վորտեղ ընտրում են սկզբնական կազմակերպության նախագահ (խորհուրդ)։ Սկզբնական կազմակերպությունը հաստատվում է Պաջավիաքիմի շրջանային (քաղաքային) խորհրդի կողմից ու անմիջորեն յենթարկվում է նրան։

3. Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպությունում, վորն իր շարքերում 100-ից ավելի անդամ ունի և ընդգրկում է ամբողջ ձեռնարկությունը, հիմնարկությունը և այլն, կարելի յե կազմակերպել, շրջ (քաղ) խորհրդի թույլտվությամբ, ցեխային և սրանց համապատասխան կազմակերպություններ (ձեռնարկության ցեխերում կամ հերթափոխերում, հիմնարկության վարչություններում և բաժիններում, խորհտնտեսության կամ անասնոտնտեսության տեղամասերում, ուսումնական հաստատության կուրսերում կամ դասարաններում)։

4. Ցեխային կազմակերպությունների ներսում, նույնպես և 100-ից պակաս անդամ ունեցող սկզբնական կազմակերպությունների ներսում կարելի յե ստեղծել պաջավիաքիմիական խմբակներ (ցեխային կազմակերպություններում՝ ըստ բրիգադների, ագրեգատների, ողակների և այլն. սկզբնական կազմակերպություններում՝ ըստ ցեխերի, բաժինների, տեղամասերի, կուրսերի և այլն)։

Խմբակում պետք է լինեն ընկերության առնվազն յերեք անդամ։

Ծանոթություն. այն դեպքերում, յերբ ընկերության անդամների մի մասը հեռանում է սկզբնական կազմակերպությունից յերկար ժամանակով, իրենց աշխատանքի բնույթի համեմատ (ձկնորսություն, վայրեղենի լաստառաքում և այլն), նրանց այդ աշխատանքի տեղում ստեղծվում են Պաջավիաքիմի ժամանակավոր կազմակերպություններ, ցեխային կազմակերպության կամ խմբակի իրավունքներով, վորոնք աշխատում են այն սկզբնական կազմակերպության ղեկավարությամբ, վորից հեռացել են ընկերության անդամները, և սերտ կապ պահպանելով Պաջավիաքիմի տեղական շրջ(քաղ) խորհրդի հետ։

III. ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5. Պաջավիաքիմի անդամ կարող է լինել ԽՍՀ Միության յուրաքանչյուր քաղաքացի, վորը հասել է 15 տարեկան հասակի։

Պաջավիաքիմի անդամ է համարվում ամեն մեկը, ով ընդունում է ընկերության կանոնադրությունը, դասվում է նրա կազմակերպություններից մեկում, մասնակցում է նրա աշխատանքին և ճշտապահորեն վճարում է անդամավճարները։

6. Պաջավիաքիմի անդամ ընդունվելը կատարվում է անհատական կարգով։ Ընկերության անդամ ընդունվելու դիմումները քննության են առնվում 15 որվանից վոչ ուշ, դրանց տալու մոմենտից հաշված։

Ցեխային կազմակերպություններ և խմբակներ չունեցող սկզբնական կազմակերպություններում ընդունման մասին դիմումները քննության են առնվում կազմակերպության անդամների ընդհանուր ժողովում (ընդունվողի ներկայությամբ)։ Ժողովի վորոշումը վերջնական է և հանդիսանում։

Այն սկզբնական կազմակերպություններում, վորոնք ցեխային կազմակերպություններ կամ խմբակներ ունեն, Պաջավիաքիմի անդամ ընդունվելը կատարվում է ցեխի (խմբակի) Պաջավիաքիմի անդամների ժողովում, սկզբնական կազմակերպության խորհրդի հետագա հաստատմամբ։

Ընդունման հարցը սկզբնական կազմակերպության խորհուրդը քննության է առնում ցեխի (խմբակի) Պաջավիաքիմի անդամների ժողովի արձանագրության և Պաջավիաքիմի մեջ ընդունվելու մասին դրան կցված դիմումների հիման վրա, ցեխային (խմբակի) կազմակերպության ներկայացուցչի ներկայությամբ։

Խորհրդում Պաշավիաքիմի անդամ ընդունվողների ներկայությունը պարտադիր չէ:

Խորհրդի վորոշումը վերջնական է հանդիսանում:

Ծանոթություն. Խմբակի ժողովի արձանագրությունն ընդունման մասին, նույնպես և խմբակի կողմից ընդունվածի գիմումը ցեխային կազմակերպությունում քննության չի առնվում, այլ ուղարկվում է անմիջորեն սկզբնական կազմակերպության խորհրդին՝ հաստատելու համար:

7. Պաշավիաքիմի անդամ ընդունված յուրաքանչյուրն ստանում է անձամբ անդամատոմս, վորը նա պարտավոր է խնամքով պահել:

Յուրաքանչյուր ընդունվածի համար լրացվում է հաշվառական քարտ, վորի մեջ նա ստորագրում է անդամատոմս ստանալու մասին:

Անդամատոմսը կորցնելու (գողանալու) դեպքում, այդ հարցը, ընկերության անդամի գրավոր դիմումի հիման վրա, քննարկվում է կազմակերպության (ցեխի, խմբակի) ընդհանուր ժողովում, վորից հետո, նայած ժողովի վորոշմանը, նոր անդամատոմս է տրվում:

8. Պաշավիաքիմի անդամը պարտավոր է.

բոլոր ուժերով ամրապնդել սոցիալիստական իրավակարգը.

անհաշտ պայքար մղել ժողովրդի թշնամիների դեմ.

ամրացնել յեղբայրական ինտերնացիոնալ հարաբերությունները ԽՍՀՄ բոլոր ազգությունների աշխատավորների և բոլոր յերկրների պրոլետարների միջև.

անդուլ աշխատել իր քաղաքական դիտելիքների բարձրացման վրա.

պահպանել Պաշավիաքիմի շարքերը՝ նրանց մեջ թշնամական տարրերի—լրտեսների, դիվերսանտների, վնասարարների և այլոց թափանցումից.

ուսումնասիրել ռազմական գործը և տիրապետել առնվազն ռազմական մասնագիտություններից մեկին.

ցույց տալ՝ աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունքի անձնական որինակ.

խնայել և ամրապնդել հասարակական սոցիալիստական սեփականությունը, պահպանել, աչքի լույսի պես, պաշտպանական դույքն ու զենքը վիչացումից և հափշտակումից.

խստորեն պահպանել ռազմական և պետական գաղտնիքը.

բացատրել աշխատավորներին Պաշավիաքիմի նպատակները ու խնդիրները, նոր անդամներ ներգրավել ընկերության շարքերը, անդուլ ամրացնել կարգապահությունը:

9. Պաշավիաքիմի անդամները իրավունք ունեն մասնակցել պաշտպանական աշխատանքի հարցերի քննարկմանը ինչպես ժողովներում, այնպես ել մամուլում, քննադատել Պաշավիաքիմի ամեն մի աշխատողին, նույնպես և ընտրել ու ընտրվել Պաշավիաքիմի ղեկավար օրգանների մեջ:

Պաշավիաքիմի անդամն իրավունք ունի՝ պահանջել անձամբ մասնակցություն ունենալու այն բոլոր դեպքերում, յերբ վորոշում է հանվում նրա գործունեության կամ վարքի մասին, և դիմել ընկերության գործերով ամեն մի հարցով կամ դիմումով Պաշավիաքիմի բոլոր որգաններին, մինչև ԽՍՀՄ Պաշավիաքիմի Կենտրոնական խորհուրդը ներառյալ:

10. Ընկերության կարգապահության խախտման համար (ժամանակին անդամավճարները չմուծելու, ժողովներին չներկայանալու, խմբակների պարապմունքները չհաճախելու համար և այլն) Պաշավիաքիմի անդամների վերաբերմամբ կիրառվում են դաստիարակչական միջոցներ և հասարակական ներգործություն:

Ընկերության անդամությունից վտարումը կատարվում է ընդհանուր ժողովի վորոշումով և կիրառվում է վորպես բացառիկ միջոց, յերբ ընկերության անդամն այնպիսի արարք է կատարում, վորը պախարակում է նրա, վորպես ԽՍՀ Միության քաղաքացու, արժանապատվությունը:

Ընկերության անդամությունից վտարումը հաստատվում է Պաշավիաքիմի շրջ (քաղ) խորհրդի կողմից, վորը վերցնում է ընկերությունից վտարվածի անդամատոմսը:

11. Պաշավիաքիմի անդամների հաշվառումը կատարվում է հաշվառական քարտերի միջոցով, վորոնք պահվում են սկզբնական կազմակերպության խորհրդում:

Ցեխային ու համազոր կազմակերպություններում, նույնպես և խմբակներում կազմվում են Պաշավիաքիմի անդամների հաշվառական ցուցակներ հետևյալ ձևով.

№№ քան կարգի	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշավիաքիմի մասնակցու ժամանակը	Անդամատոմսի №-ը	Սեռ	Տարիք	Զբաղմունքը	Պաշտոնը արտադրության մասնաճյուղում կամ ցեխում	Դպրոցական կրթությունը, մասնագիտությունը, գիտական աստիճանը	Նշումներ, հետաքրքրվելու ժամանակ անհրաժեշտ տվյալներ
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ընկերության անդամները, վորոնք հեռանում են կազմակերպությունից, պարտավոր են դուրս գալ հաշվառումից (ստանալ հաշվառական քարտը), իսկ մի ուրիշ կազմակերպություն գալուն պես, հաշվառման մեջ անցնել (հանձնել հաշվառական քարտը):

Ծանոթություն· սկզբնական կազմակերպության նախագահը յուրաքանչյուր յեռամսյակի վերջում ստուգում է հաշվառական քարտերը Պաջավիաքիմի առկա յեղած անդամների և ցեխային կազմակերպությունների և խմբակների ցուցակների հետ ներկայացնում է շրջ (քաղ) խորհրդին վիճակագրական հաշվետվությունը, սահմանված ձևով, բացատրագրի հետ միասին, վորոնց պատճենները թողնում է սկզբնական կազմակերպության գործերում:

IV. ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

12· Պաջավիաքիմի յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար որգանը հանդիսանում է կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը (կոնֆերենցիան):

Ընդհանուր ժողովը հանդիսանում է Պաջավիաքիմի անդամների բոլշևիկյան դաստիարակության մի դպրոց և նրանց յենթարկում է մոբիլիզացիայի, Պաջավիաքիմի կազմակերպության առաջ դրված խնդիրների կատարման համար:

13· Սկզբնական (ցեխային) կազմակերպությունների անդամների ընդհանուր ժողովը հավաքվում է ամսական մեկ անգամից վոչ պակաս:

Ժողովն իրավահասու է կազմակերպության անդամների ընդհանուր թվի 2/3 առկայության դեպքում:

Խոշոր կազմակերպություններում, վորոնք 500-ից ավելի անդամ ունեն, կոնֆերենցիաներ են անցկացնում տարեկան յերկու անգամից վոչ պակաս:

Կոնֆերենցիայի համար ներկայացուցչության նորմաները սահմանվում են Պաջավիաքիմի շրջ (քաղ) խորհրդի կողմից:

14· Ժողովի (կոնֆերենցիայի) գումարման, տեղի և որակարգի մասին Պաջավիաքիմի բոլոր անդամները պետք է տեղեկացված լինեն առնվազն յերեք որ առաջ:

15· Ժողովում վճռական ձայնի իրավունքով ողտվում են միմիայն Պաջավիաքիմի անդամները: Հարցերը (բացի ընտրություններից) վորոշվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

16· Պաջավիաքիմի անդամների ժողովներում ներկազմակերպական կարգի հարցերի քննարկման հետ միասին (ղեկավար որգանների ընտրություններ, պլանի, վիճակագրական և ֆինանսական հաշվետվությունների հաստատում, անդամների ընդունելություն, խորհրդի, խմբակների ղեկավարների, խմբակների կազմակերպիչների հաշվետվությունները և այլն) պետք է դնել նաև ղեկուցումներ՝ կուսակցության և կառավարության վորոշումների, միջազգային դրության մասին, քաղաքացիական պատերազմի պատմության վերաբերյալ, Կարմիր բանակի և նավատորմի մասին, ոտարերկրյա հետախուզության դեմ պայքարի մասին և այլն:

17· Ժողովներում պետք է բայնորեն ծավալվեն բոլշևիկյան ինքնաքննադատությունը և քննադատությունը, առանց նայելու դեմքին ու դիրքին, պետք է մերկացվեն կազմակերպության աշխատանքի բոլոր թերությունները և մտցվեն կոնկրետ առաջարկություններ դրանց վերացման համար: Անհրաժեշտ է հասնել այն ատիճանին, վորպեսզի ժողովներն անցնեն կազմակերպության անդամների բարձր ակտիվության առկայությամբ:

18· Ժողովը վարելու համար ընտրվում է ժողովի նախագահություն, վորն էլ կազմում է արձանագրությունը, դրի առնելով ժողովի մասնակիցների յելույթները և առաջարկությունները:

Ժողովից հետո արձանագրության բնագիրը պահվում է սկզբնական կազմակերպության նախագահի կողմից կազմակերպության գործերում, իսկ դրա պատճենն ուղարկվում է Պաջավիաքիմի շրջխորհրդին:

V. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԵՎ ՆՍԽԱԳԱՀԸ

19· Ընթացիկ աշխատանքը վարելու համար Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպությունը, վորը 15-ից ավելի անդամ ունի, ընտրում է ընդհանուր ժողովում (կոնֆերենցիայում) խորհուրդ, 3-ից մինչև 11 մարդու կազմով:

20· Սկզբնական կազմակերպության խորհուրդն իր նիստում ընտրում է խորհրդի անդամների կազմից խորհրդի նախագահ, նրա տեղակալ և խորհրդի քարտուղար:

21· Պաջավիաքիմի խոշոր սկզբնական կազմակերպություններում, վորտեղ անդամների թիվը 500-ից ավելի յե, կարող են՝ մարզային, յերկրային, հանրապետական խորհրդի հաստատումով, ընտրվել Պաջավիաքիմի ընդհանուր գործարանային (ֆաբրիկային) խորհուրդների նախագահություններ 5-7 մարդու կազմով:

Պաջավիաքիմիական ցեխային կազմակերպություններին այդ դեպ-

քում վերապահվում են Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպութիւնների իրավունքներ:

22· Սկզբնական կազմակերպութիւնում, վորի անդամների թիվը 15–ից պակաս է, Պաշավիաքիմի անդամների ժողովում ընտրվում են սկզբնական կազմակերպության նախագահ և նրա տեղակալ:

23· Սկզբնական կազմակերպությունների նախագահները և նախագահների տեղակալները հաստատվում են շրջխորհրդի կողմից:

24· Ցեխային և սրանց համարար կազմակերպություններում, վորոնց անդամների թիվը 25–ից ավելի է, ընտրվում է խորհուրդ 3–ից մինչև 5 մարդու կազմով, իսկ խորհրդի անդամների նիստում ընտրվում է խորհրդի նախագահ, նրա տեղակալ և խորհրդի քարտուղար:

25· Ցեխային ու սրանց համարար կազմակերպություններում, վորոնց անդամների թիվը 25–ից պակաս է, կազմակերպության անդամների ժողովում ընտրվում են ցեխային կազմակերպության նախագահ ու նրա տեղակալ:

26· Ցեխային խորհուրդներն աշխատանքը վարում են սկզբնական կազմակերպության խորհրդի ղեկավարությամբ:

Ցեխային կազմակերպությունների նախագահները և նախագահի տեղակալները հաստատվում են սկզբնական կազմակերպության խորհրդում:

27· Խմբակի անդամների ժողովն ընտրում է խմբակի կազմակերպիչ, վորն աշխատանքը վարում է սկզբնական կազմակերպության խորհրդի (նախագահի) կամ ցեխային կազմակերպության խորհրդի (նախագահի) ղեկավարությամբ:

28· Խորհուրդը պատասխանատու է կազմակերպության վողջ աշխատանքի համար: Կազմակերպության և նրա խորհրդի աշխատանքի համար առաջնահերթ պատասխանատվությունը կրում է խորհրդի նախագահը:

Սկզբնական կազմակերպության խորհուրդը և նախագահը կյանքում անց են կացնում կուսակցական և խորհրդային կազմակերպությունների վորոշումները. Պաշավիաքիմի վերադաս որգանների և Պաշավիաքիմի անդամների ընդհանուր ժողովների (կոնֆերենցիաների) ցուցումները և կազմակերպում են դրանց կատարման սիստեմատիկ ստուգում:

29· Պաշավիաքիմի խորհուրդն անց է կացնում իր նիստերն առնվազն ամսական յերկու անգամ:

30· Խորհրդի անդամները բաշխում են իրենց միջև պարտականությունները մոտավորապես հետևյալ կերպ· մեկին հանձնարարվում է մասսայական պաշտպանական ագիտացիան և պրոպագանդան, մյուսին՝ հրաձգային սպորտը, յերրորդին՝ ավիասպորտը, հետևյալներին ծովային դործը, ՀՈՒՊ և այլն: Խորհրդի անդամները կարող են համատեղել աշխատանքի յերկու–յերեք ճյուղերի անմիջական ղեկավարությունը:

31· Խորհուրդը քննարկում է և դուրս է բերում Պաշավիաքիմի կազմակերպության ժողովի քննության և հաստատման համար՝

ա) կազմակերպությունների հաշվետվություններն աշխատանքի վիճակի մասին և խնդիրները·

բ) կազմակերպությունների աշխատանքի ամսական որացուցային պլանները·

գ) տարեկան նախահաշիվը (միջոցների մուտքի և յելքի)·

դ) իր կազմակերպության կվարտալային վիճակագրական հաշվետվությունները:

Ծանոթություն· Պաշավիաքիմի այն սկզբնական կազմակերպություններում, վորոնք ցեխային կազմակերպություններ ունեն, բ, գ, դ կետերում թված հարցերը վորոշվում են ցեխային կազմակերպություններում և սկզբնական կազմակերպության խորհուրդներում, առանց նրանց քննարկման սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովում:

32· Պաշավիաքիմի խորհուրդը պարտավոր է·

ա) կազմակերպել պաշտպանական աշխատանքը Պաշավիաքիմի անդամների մեջ, ռազմական դիտելիքների պրոպագանդա մղել աշխատավորների մեջ և ներդրավել նրանց ընկերության անդամների շարքերը·

բ) վարել կազմակերպության անդամների հաշվառումը·

գ) կազմակերպել սոցիալիստական մրցակցություն Պաշավիաքիմի անդամների միջև, նույնպես և խմբակների և ցեխային կազմակերպությունների միջև, պաշտպանական աշխատանքը լավագույն կերպով անցկացնելու և ռազմական մասնագիտություններին տիրապետելու համար·

դ) կանոնավոր կերպով հրահանգավորել և անցկացնել ցեխային կազմակերպությունների նախագահների և նրանց տեղակալների և խմբակային կազմակերպիչների սեմինարներ և կարգավորել նրանց աշխատանքի փորձի փոխանակումը·

ե) անցկացնել պաշտպանական խմբակների ղեկավարների, հասարակական հրահանգիչների սեմինարներ (ուսուցում) և ստուգել խմբակներում նրանց կատարած աշխատանքի վորակը·

զ) ապահովել սկզբնական կազմակերպության ամբողջ դույքի ճիշտ հաշվառումն ու պահումը·

է) անցկացնել Պաշավիաքիմի վիճակախաղի տոմսերի իրացումը,

կազմակերպել անդամավճարների ժամանակին հավաքումը և վարել ֆինանսական հաշվետվությունը, միջոցների մուտքը և ծախսումը։

ը) կանոնավոր կերպով լսել խորհրդի անդամների և Պաշավիաքիմի առանձին անդամների հաշվետվությունները՝ նրանց հանձնարարած պարտականությունների և առանձին կոնկրետ առաջադրությունների կատարման մասին։

33. Սկզբնական (ցեխային) կազմակերպության նախագահը (խմբակային կազմակերպիչը) պետք է որինակ ցույց տա պաշտպանական աշխատանքն անցկացնելու գործում, պաշտպանական գործի տիտատոր ու կազմակերպիչ լինի։

Նախագահն ամբողջ աշխատանքն անց է կացնում հենվելով կազմակերպության ակտիվի վրա, առաջին հերթին խորհրդի անդամների և հասարակական հրահանգիչների վրա։

34. Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպության նախագահն անձամբ պատասխանատու է կազմակերպության դուրքը պահելու և խնամելու համար, նրա անդամների հաշվառման համար, նույնպես և կատարած աշխատանքի հաշվառումը վարելու համար, միջոցները կանոնավոր ծախսելու և աշխատանքի պլանը կազմելու համար, նախապատրաստում է խորհրդի նիստերը կամ ժողովի գումարումը և կոնկրետ առաջադրություններ է տալիս խորհրդի անդամներին և Պաշավիաքիմի անդամներին ինչպես աշխատանքի հաստատված պլանի կատարման կարգով, այնպես էլ կարիք յեղած դեպքում։

35. Սկզբնական կազմակերպության խորհուրդը և նախագահը (խորհրդի) հաշվետվություն են տալիս իրենց կատարած աշխատանքի մասին սկզբնական (ցեխային) կազմակերպության ժողովի (կոնֆերենցիայի) առաջ (յեռամսյակում մեկ անդամից վոչ պակաս) և վերադասղեկավար որգանների առաջ։

Ծանոթություն. յեթե վորևե պատճառով նախագահը հեռանում է կազմակերպությունից կամ ազատվում է ղեկավարությունից, նա պարտավոր է հաշվետվություն ներկայացնել իր աշխատանքի մասին իր կազմակերպության ժողովում (կոնֆերենցիայում) և հանձնել գործերը նոր նախագահին ակտով։

VI. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԸ

36. Սկզբնական կազմակերպության ամբողջ աշխատանքը, վորպես կանոն, տարվում է հասարակական կարգով (ձրիաբար)։

Կազմակերպության հասարակական ակտիվը կազմում են խմբակային կազմակերպիչները, ցեխային կազմակերպությունների նախագահները, խորհրդի անդամները, ագիտատորները, զրուցավարները, ընթերցողները, պաշտպանական խմբակների, խմբերի (կոմանդաների) ղեկավարները, նույնպես և ՎՀ, ՀՈՌՊ լավագույն կրծքանշանակիրները և ուրիշները, վորոնք ակտիվորեն ոգնում են պաշտպանական աշխատանքի անցկացմանը և անձամբ որինակ են ցույց տալիս ռազմական մասնագիտություններին տիրապետելու գործում։

37. Սկզբնական և ցեխային կազմակերպությունների նախագահները և խմբակային կազմակերպիչները կանոնավոր կերպով դումարում են ակտիվի ժողովներ, ներգրավում են խմբակների և կոմանդաների մեջ նոր ակտիվ, առաջին հերթին ԲԳԿԲ պահեստի հրամանատարներին և քաղաշխատողներին։

38. Լավագույն ակտիվիստները պետք է մատնանշվեն ժողովներում, մամուլում և այլն։ Պաշտպանական աշխատանքի ամենից շատ աչքի ընկնող առաջավորները, սկզբնական կազմակերպության կողմից շրջխորհրդի առաջ հարուցած միջնորդության հիման վրա, կարող են ներկայացվել պարգևատրման համար՝ պատվո գրով «Ակտիվիստ» կրծքանշանով կամ ՅԱՕՐ (Պաշտպանական աշխատանքի ակտիվիստի նշանակ) կրծքանշանով։

VII. ՀԱՍԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

39. Ամբողջ մասսայական-քաղաքական աշխատանքը Պաշավիաքիմիական կազմակերպությունն անց է կացնում կուսակազմակերպության ռամիջական ղեկավարությամբ և վերահսկողությամբ։

40. Պաշավիաքիմի կազմակերպություններում պետք է անցկացվեն Պաշավիաքիմի անդամների և բոլոր աշխատավորների համար, վոչ աշխատանքային ժամանակ, զեկուցումներ, դասախոսություններ, զրույցներ և ընթերցումներ՝ միջազգային, ռազմա-պատմական, ռազմա-թեորետիկական և այլ պաշտպանական թեմաների շուրջը։

41. Զեկուցողները, ագիտատորները, զրուցավարները, ընթերցողները, վորոնք ընտրվում են Պաշավիաքիմի խորհրդի կողմից, հաստատվում են համապատասխան կուսակցական կազմակերպությունների կողմից։

42. Սկզբնական կազմակերպությունները ձեռք են բերում անհրաժեշտ գրականություն՝ մասսայական-քաղաքական աշխատանքի ու ռազմական ուսուցման համար և փոքրիկ գրադարան են ստեղծում ղեկավար ակտիվի համար։

43. Լայնորեն ծավալած մասսայական քաղաքական աշխատանքը պետք է հիմք ծառայի աշխատավորների լայն ներգրավմանը Պաշավիաքիմի շարքերը, մասսայական պաշտպանական աշխատանքի։

44. Սկզբնական կազմակերպությունում, նայած ուժերի, միջոց-

Նեբի և անդամների պահանջների առկայությանը, ստեղծվում են խմբակներ՝ 1-ին և 2-րդ աստիճանի վորոշիլովյան հրաձիգներ, ՀՈՒՊՊ 1-ին և 2-րդ աստիճանի կրծքանշանակիրներ, գնդացրորդներ, նռնաձիգներ, վորոշիլովյան ձիավորներ պատրաստելու համար, նույնպես և խմբակներ՝ սվինամարտի և ձեռնամարտի, տեղագրության, կապի ուսումնասիրության համար, պլանեբային, պարաշյուտային, ավիամոդելային խմբակներ, ծովայիններ, կարճալիք-ռադիոսիրողներ, պաշտոնեական չնաբուծության և աղավնաբուծության մասնագետներ, մոտոցիկլիստներ, շոֆերներ, տանկիստներ, հեծանվորդներ և այլն պատրաստելու համար:

45. Խմբակների մեջ ներդրավվում են ինչպես Պաշավիաքիմի անդամները, այնպես էլ բոլոր աշխատավորները, վորոնք ցանկանում են տիրապետել այս կամ այն ռազմական մասնագիտությանը, հանձնել նորմաներն այս կամ այն պաշտպանական կրծքանշան ստանալու համար:

Խմբակի կազմում չի հանձնարարվում ունենալ 15–20 մարդուց ավելի:

Ուսուցումը խմբակներում անց է կացվում ԽՍՀՄ Պաշավիաքիմի Կենտխորհրդի ծրագրերով: Խմբակները գլխավորում են հրահանգիչ-ղեկավարները:

46. Խմբակի հրահանգիչ-ղեկավարը կազմում է ուսումնական պլանը, դասացուցակը, անց է կացնում պարապմունքները, ապահովում է ուսումնական ձեռնարկների, վարժական դույլի և զենքի կանոնավոր խնամումը, պահումը և շահագործումը, կատարում է խմբակի աշխատանքի հաշվառումը, նույնպես և կազմակերպում է սոցիալիստական մրցակցությունն ունկնդիրների միջև ռազմական մասնագիտությանը դերազանցորեն տիրապետելու համար: Անցկացրած յուրաքանչյուր պարապմունքի մասին խմբակի հրահանգիչ-ղեկավարը տեղեկացնում է կազմակերպության նախագահին, իսկ խմբակի փողջ աշխատանքի մասին հաշիվ է տալիս խորհրդում:

Խմբակների հրահանգիչ-ղեկավարներն ընտրվում են սկզբնական կամ ցեխային կազմակերպության խորհրդի կողմից և հաստատվում են Պաշավիաքիմի շրջանային կամ քաղաքային խորհուրդների կողմից:

47. Խմբակի ներքին կազմակերպական աշխատանքը տանելու համար խմբակայինների ժողովում ընտրվում է խմբակի ավագ:

Ավագի վրա դրվում է. խմբակի կազմի հաշվառումը, հոգացողությունը զենքի մասին, ուսումնական պիտույքների պատրաստման մասին, ունկնդիրների կողմից պարապմունքների հաճախելիության հաշվառում կատարելը, սկզբնական կազմակերպության նախագահի առաջ հաշիվ դնելը՝ հասարակական կարգապահությունը խախտողների մասին և այլն:

Խմբակի աշխատանքի հաշվառումը կատարվում է հետևյալ ձևով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՍՐ

_____ կից

(ձեռնարկության անունը)

Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպության _____ խմբակի

(խմբակի անունը)

Ամիս, ամսաթիվ	Ինչով է պարապել խմբակը	Պարապմունքներին ներկա յեղածների քանակը	Խմբակի հրահանգիչի ստորագրությունը
1	2	3	4

48. Կազմակերպության խորհուրդը և նախագահը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն նախակոչյան յերիտասարդության հետ տարվելիք աշխատանքին:

Նրանք իրենց մոտ նախակոչիկների հաշվառում են կատարում, նրանց ներդրավում են ռազմական խմբակների մեջ, հատկապես ԲԴԿԲ և ՌՄՆ կանոնադրքերի ուսումնասիրման խմբակների մեջ, բացատրում են նրանց զինվորական յերդման տեքստը, ձգտում են այն բանին, վոր կիսադրագետները բոլորն էլ ընդգրկված լինեն հանրակրթական ուսուցումով՝ նախակոչյան յերիտասարդության դպրոցներին կից, այդ գործում աջակցելով ռազմկոմատներին և ժողովրդական կրթության որգաններին:

Յուրաքանչյուր սկզբնական կազմակերպության խնդիրն է՝ մինչև ԲԴԿԲ կանչվելը նախակոչիկներից պատրաստել ՎՀ, ՀՈՒՊՊ կրծքանշանակիրներ, «վորոշիլովյան ձիավոր» և այլն, վորպեսզի վոչ մի նախակոչիկ չլինի, վորը պատրաստված չլինի ընդհանուր գծերով վորոշ ռազմական մասնագիտության նկատմամբ:

49. Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպությունը պետք է աշխատանք տանի իր յենթաշեֆ դպրոցի յերեխաների մեջ, նրանց հետ տնցկացնի ռազմականացված խաղեր, արշավներ, եքսկուրսիաներ, մրցակցություններ:

Յերեխաները, մինչև 15 տարեկան հասակը, կամավոր կերպով կազմակերպվում են խմբակներում և հանձնում են «Պատանի վորոշիլովյան հրաձիգ» (ՊՎՀ), «Յեղիր պատրաստ հակոդային և քիմիական պաշտպանության» (ՅԵՊՀՈՒՊ), «Պատանի ծովային», «Պատանի ավիաշինարար», «Պատանի վորոշիլովյան ձիավոր» կրծքանշանների նորմաները:

50. Բնակելի տների սկզբնական կազմակերպությունը ջոկում է իր լավագույն ակտիվիստներին, ինքնապաշտպանության խմբակներ կազմում և աջակցություն է ցույց տալիս նրանց աշխատանքի ընթացքում:

51. Սկզբնական կազմակերպությունը մասնակցում է Պաշավլաքիմի վարժականների, աերոակումբների, հրաձգային և հեծյալ-սպորտային ակումբների, դպրոցների, կուրսերի, սեմինարների կոմպլեկտավորմանը, բացատրում է աշխատավորներին ուսուցման պայմանները և ձևակերպում է նրանց ուղարկումն ուսուցման համար. ոգնություն է ցույց տալիս պաշավիաքիմիական, վարժական կազմակերպություններին սովորողների (պիլոտների, սնայպերների, պարաշյուտիստների և այլն) պարբերական հավաքներով և ստուգում է նրանց առաջադիմությունն ու կարգապահությունը, պարզում է ուսուցման թերությունները և հարց է դնում համապատասխան խորհրդի առաջ, որի իրավասության տակ գտնվում են վարժական կազմակերպությունները, հայտաբերված թերությունների վերացման մասին:

Ծանոթություն. Խոշորագույն ձեռնարկություններում պաշավիաքիմիական սկզբնական կազմակերպությունները կարող են ստեղծել, համապատասխան վերադաս խորհրդի հաստատումով և աջակցությամբ, վարժական կազմակերպություններ (վարժականներ, ակումբներ, դպրոցներ, կուրսեր և այլն):

52. Սկզբնական կազմակերպությունը կանոնավոր կերպով անց է կացնում աշխատավորների մեջ մասսայական ռազմական պարապմունքներ և ռազմականացված խաղեր (յերթեր, տակտիկական խաղեր, պարապմունքներ դաշտում, հակագազը հագած աշխատանք դազդյահմոտ, ՀՈՒՊՊ տաղնապներ և այլն). սիստեմատիկորեն անց է կացնում հրաձիգների, նռնաձիգների, գնդացրորդների, քիմիկոսների, պլանիրիստների, ավիամոդելիստների մրցակցություններ (անհատական և կոմանդաների):

53. Սկզբնական կազմակերպությունը կահավորում է ռազմական անկյուններ կամ սենյակներ, կաբինետներ (քաղաքներում), պաշտպանության խրճիթներ (գյուղական վայրերում), նույնպես և տիրեր անհրաժեշտ վարժական-դիտողական պիտույքներով և պրիբորներով կամ հրաձգության համար անվտանգ տեղեր, նշանակելով տիրերի, ռազմական կաբինետների (սենյակների, անկյունների, պաշտպանության խրճիթների և այլն) ղեկավարներ:

54. Սկզբնական կազմակերպությունն իր անդամներին ներգրավում է աշխատավորների սոցիալիստական մրցակցության՝ ձեռնարկությունը և այլն «պաշտպանության ամրոց» դարձնելու համար:

55. Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպությունը Ռուսաստանի Կարմիր Խաչի ընկերության (ՌԿԽԸ) կազմակերպության հետ միասին անց են կացնում ամիսը յերկու անգամ պաշտպանության որ, որը կարող է լինել խմբակների պարապմունքների որը, նույնպես և պաշտպանական աշխատանքի վիճակի մասսայական ստուգման և ընկերության անդամների ու բոլոր աշխատավորների մոբիլիզացիայի որը, պաշտպանական խնդիրները լավագույն կերպով կատարելու համար:

56. Ցուրաքանչյուր մասսայական միջոցառում պետք է անցկացվի վաղորոք մշակված և ձեռնարկության (խորհտնտեսության, հիմնարկության, դպրոցի և այլն) կուսակցական կազմակերպության կողմից հաստատված պլանով:

VIII. ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԸ ՅԵՎ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԸ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

57. Պաշավիաքիմի անդամ ընդունվածները, անդամատոմսն ստանալու ժամանակ վճարում են, բացի տոմսի արժեքից, մուտքի վճար մեկ ռուբլի դրամարով: Մուտքի վճարի դրոշմանիշները փակցվում են հաշվառական քարտի վրա:

Հետագայում Պաշավիաքիմի անդամները ամեն յեռամսյակում մուծում են անդամավճարները.

ամսական մինչև 150 ռուբլի աշխատավարձ ստացողները, նույնպես և տնային տնտեսուհիները, զանազան դպրոցների, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները, թոշակառուները և կարմիր բանակայինները — տարեկան մեկ ռուբլի.

ամսական մինչև 300 ռուբլի աշխատավարձ ստացողները, կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները— տարեկան յերկու ռուբլի.

300 ռուբլուց ավելի աշխատավարձ ստացողները— տարեկան յերեք ռուբլի:

Մանկատների սաներն ազատվում են մուտքի վճարներից և անդամավճարներից:

58. Բոլոր հավաքած անդամավճարներն ամբողջովին փոխանցվում են Պաշավիաքիմի կենտրոնական խորհրդին (50 ռուբլուց ավելի մուծումները հանձնվում են Պետրանկին հատուկ հաշվով, 50 ռուբլուց պակաս դրամարները՝ Պաշավիաքիմի շրջխորհրդին դրամարկղին):

59. Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպություններում, որոնք ցեխային կազմակերպություններ [illegible] անդամավճարներն

(558855/22182-59)

ՀԱՅԿ ԱՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԱՆ ZUUP Арм.ССР

ընդունում է սկզբնական կազմակերպության նախագահը կամ նախագահի տեղակալը:

Ցեխային կամ նրանց համազոր կազմակերպություններ ունեցող կազմակերպություններում անդամավճարներն ընդունում է ցեխային կազմակերպության նախագահը:

Իսկ ամենախոշոր կազմակերպություններում, սկզբնական կազմակերպության խորհրդի վորոշման համաձայն, անդամավճարների հավաքումը կարող են կատարել խմբակային կազմակերպիչները:

60· Անդամավճարներն ստանալու ժամանակ անդամատոմսի հատուկ թերթիկների վրա փակցվում է համապատասխան դրոշմանիշ մուծման դումարով, իսկ Պաջավիաքիմի անդամի հաշվառական քարտի մեջ նշում է արվում «վճարված է», վորը վավերացվում է սկզբնական կազմակերպության նախագահի ստորագրությամբ:

Ցեխային կազմակերպությունների նախագահները և խմբակային կազմակերպիչները կազմում են Պաջավիաքիմի այն անդամների ցուցակները, վորոնք նրանց վճարել են անդամավճարները: Այդ ցուցակները նրանք հանձնում են, հավաքած աղամավճարների հետ միասին սկզբնական կազմակերպության նախագահին Պաջավիաքիմի անդամների հաշվառական քարտերի մեջ մուծումների վճարման մասին նշումներ անելու համար: Բացի այդ, նրանք վճարման մասին նշում են անում Պաջավիաքիմի անդամների հաշվառական ցուցակում (տես § 11):

Մուտքի վճարների և անդամավճարների դրոշմանիշները հաշվառման են վերցվում Պաջավիաքիմի շրջ (քաղ) խորհրդում:

Ցուրաքանչյուր յեռամսյակի առաջին ամսվա 5-ից վոչ ուշ սկզբնական կազմակերպության նախագահը հաշվետվություն է ներկայացնում սահմանված ձևով անդամավճարների և մուտքի վճարների դրոշմանիշների ծախսման և անդամավճարների փոխանցման մասին: Հաշվետվության բլանկները կամ ձևը նա ստանում է Պաջավիաքիմի շրջ (քաղ) խորհրդում:

61· Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպության միջոցները կազմվում են մուտքի վճարներից, Պաջավիաքիմի վիճակախաղերի լրացման հատկացումներից, ֆաբզործտեղկոմների բյուջեների և կոնտեսությունների և արտելների կուլտֆոնդի հատկացումներից, նույնպես և հրաձիգների, պլաներիստների և այլոց պատրաստման հաժար ստացած դումարներից:

Միջոցները պահվում են Պետբանկում հատուկ հաշվում կամ խնայողական դրամարկղում:

Միջոցների ծախսումը կատարվում է խորհրդի վորոշման համաձայն հաստատված նախահաշվով միմիայն Պաջավիաքիմի կազմակերպության նպատակային կարիքների համար՝ ուսումնական-դիտողական պիտույքների և վարժական նյութերի ձեռք բերում, մասսայական պաշտպանական միջոցառումների անցկացում, ռազմական կաբինետի, պաշտպանության խրճիթի, ռազմական անկյան կահավորում, տիրի, սպորտ-ռազմական հրապարակի շինարարություն և այլն:

62· Սկզբնական կազմակերպությունը պահում է իր ամբողջ պաշտպանական դույքը խիստ հաշվառքում և ապահովում է դրա վոստահելի պահումը, խնամումը և վերանորոգումը:

Պաջավիաքիմի կազմակերպությունները և նրանց յուրաքանչյուր անդամ պարտավոր են աչքի լույսի պես պահպանել պաշտպանական դույքը և զենքը փչացումից ու հափշտակումից: Անհրաժեշտ է հատուկ խնամքով պահել զենքը, հիշելով, վոր նրա կորուստը ձեռնտու է թշնամիներին, իսկ նրա հետ անզգույշ վարվելու դեպքում, կարող են դժբախտ դեպքեր տեղի ունենալ:

IX. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

63· Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպությունն անց է կացնում իր վողջ աշխատանքը կուսակցական կազմակերպության անմիջական ղեկավարությամբ: Սկզբնական կազմակերպության նախագահը սիստեմատիկորեն տեղեկացնում է կուսակցական կազմակերպության ղեկավար որգաններին պաջավիաքիմիական աշխատանքի վիճակի, պլանի կատարման մասին:

Սկզբնական կազմակերպությունը սերտ կապ է պահպանում Հանրակրթության կոմյերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների հետ: Պաջավիաքիմի ամենորյա վողջ աշխատանքը պետք է լայնորեն կապակցված լինի Կարմիր Խաչի, Կարմիր Մահիկի և Ֆիզկուլտուրայի տեղական կազմակերպության աշխատանքի և այլոց հետ, նույնպես և յենթաշեֆ զորամասի հետ:

X. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

64· Պաջավիաքիմի սկզբնական կազմակերպությունները, վորոնք 15-ից ավելի անդամ ունեն, ընտրում են վերստուգիչ հանձնաժողովներ, 3—5 մարդու կազմով: Հանձնաժողովն իր կազմից հանձնաժողովի նախագահ է ընտրում բաց քվեարկությամբ:

Վերստուգիչ հանձնաժողովներն իրենց գործունեության համար հաշվետու են կազմակերպության ընդհանուր ժողովի առաջ:

Պաշավիաքիմի կազմակերպություններում, որոնց անդամների թիվը 15-ից պակաս է, վերստուգման աշխատանքը հանձնարարվում է ժողովի կողմից Պաշավիաքիմի անդամներից մեկին (վերաքննիչ):

65. Վերստուգիչ հանձնաժողովը (վերաքննիչը) պարբերաբար, յուրաքանչյուր եռամսյակի վերջում ստուգում է՝ միջոցների ծախսման, անդամավճարների և մուտքի վճարների հավաքման և Պաշավիաքիմի վիճակախաղի հաշվարկների ճշտությունը, սկզբնական կազմակերպության ամբողջ գույքի վիճակը, պահումը, խնամումը և պաշավիաքիմական տնտեսության վիճակը:

Ստուգման արդյունքները ձևակերպվում են ակտով, քննության են առնվում Պաշավիաքիմի անդամների ընդհանուր ժողովում և հաղորդվում են շրջխորհրդին:

66. Վերստուգիչ հանձնաժողովը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի՝ վատնումները, հափշտակումները և գույքն ու դենքը պահելու և խնամելու անփութությունը կանխելու համար:

Կազմակերպությունների ֆինանսական-տնտեսական գործունեության թերությունները վերացնելու մասին վերստուգիչ հանձնաժողովների կողմից խորհուրդներին տրվող ցուցումները պարտադիր են կատարելու համար:

67. Վերստուգիչ հանձնաժողովը քրեական հետապնդում է հարուցում այն անձնավորությունների դեմ, որոնք քրեական հանցանք են կատարել:

68. Վերստուգիչ հանձնաժողովը (վերաքննիչը) ներդրավում է իր աշխատանքի մեջ Պաշավիաքիմի ակտիվիստներին:

Ծանոթություն. սկզբնական կազմակերպությունների վերստուգիչ հանձնաժողովների և խորհուրդների միջև առաջացած տարաձայնությունները վորոշվում են ընդհանուր ժողովում և հաղորդվում են Պաշավիաքիմի վերադաս խորհուրդներին և վերստուգիչ հանձնաժողովներին:

ՀՍՍՌ Գիտ.ԸՍՏ

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

ՀՀ Ազգային գրադարան
NL0219646

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

40.475

ПОЛОЖЕНИЕ
о первичной организации
Осоавиахима СССР и РСФСР

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.